

անուերունը մանուկներ և կիներ ան-  
գամ, որոնք թէ բնչաղէս կը վատահին  
հեռաւոր տեղերէ յերուսաղէմ ճանա-  
պարհօրդել մարդ ցաւօք եւ հեծու-  
թեամբ կը պաշարի ։ Արդ՝ որոնք որ  
այն աղջտից առաջն առնելու համար  
հոդ կը տանին, ոչ միայն Ս. Աթոռոյս  
համար բարիք մը ըրած կը լինին, այլ  
հանուր Ազգի պատիւն պահպանած կը  
լինին, ըստովով որ նորա աղքատներն  
թափառական ջրին, անարդ կեանք  
ունենան և օտարներէն նախատուին :

### ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Քաղաքիս Վահեմ. Բդէշլոն՝ Ալլ  
Պէյ փոխուած լինելով իւր յաջորդն  
արդէն ճանապարհ ելած է Պօլէն և  
առաջիկայ շոգենաւով ՚ի Յոպպէ պի-  
տի ժամանէ, որոյ գիմաւորութեան  
համար արդէն պատրաստութիւններ  
եղած են թէ Քաղաքական Կառավա-  
րութեան և թէ Երուսաղէմի Պատ-  
րիարքական Վարչութեանց կողմէն :

— Եփրաթացի Միոթար Սիլիմ  
Յսման անձն, Երուսաղէն Բեթէհէմ  
Երթալու ժամանակ, իւր թշնամինե-  
րէն ողաշարուելով մորթուերէ, գը-  
լուխն մարմնէն կաշխով միոյն կցուած  
մնալով և այսպէս տարուերէ ՚ի Բեթ-  
էհէմ: Կառավարութիւն սկսած է խու-  
զարկել, բայց ոճրագործք տակուին  
գտնուած չեն, և որոց թշնամութեան  
մասին որ կասկածներ կան, նոքա ևս  
բացէ ՚ի բաց կը մերժեն, որ ամենե-  
ւին իրենց մասնակցութեամբ չէ կո-  
տարուած յիշեալ մարդասպանու-  
թիւնն :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐՈՒԿՈՒԹԻՒՆՔ  
Դ Ա Ս Ե .

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԿՐՈՆԱԿԱՆ

Գեղեցիկ ոճով և պարզ մեկնու-  
թեամբ բացատրուած է սյն Տետ-  
րակին մէջ կրօնական անտարբերու-  
թեան տեսակներն և վնասներն . լու-  
սաքանուած է պարզապէս՝ թէ բնչ-  
քան թշուառ է մի ժողովուրդ, մի  
ազգ, մի հասարակութիւն, երբ կը-  
րոնական անտարբերութիւնն տիրած  
է իւր անդամոց մէջ և ընդհակառակն՝  
թէ բնչքան երջանիկ է մի ժողովուրդ,  
երբ Քրիստոնէական Կրօնն հիմն բըռ-  
նած է իւր երկրաւոր և երկնաւոր ճըշ-  
մարիս երջանկութեան :

Պին Դ Լ ի ւ Շ ա կ է ի ւ ն :

### ՍԻՐՈՒՆ ԶԲՈՍԵՐՈՒՆ

Հետաքրքրաշարժ փոքրիկ Վըբցի,  
88 երեսէ բազկացեալ, թարգմանու-  
թիւն Վրիգոր Վարդապետի կ. Պօլ  
սեցւոյ, որ կը պարունակէ իւր մէջ  
Տասն հիւթաւոր Գոյտկաց կամ Իմ  
պելեաց դիմառնական բանախօսու-  
թիւններն, բարոյական մարդիչ և հր-  
րահանդիչ եղանակաւ : Այն բանա-  
խօսութեանց կամ ատենախօսու-  
թեանց մէջ իւրաքանչիւր Գոյտկաց կը  
ջանայ զինքն չատագութել իսկ ընդհա-  
կառակն՝ իւր դիմախօսն կը ճշնի նորա  
վնասակար յատկութիւններն յերեան  
հանել, որով մին զինւան յաղթահարե-  
լով կը նշաւակնեն զմիմեանս և կը պար-  
զեն, որ վնասակար է մարդոյ՝ չարո-  
չար գործածութիւն ոգելից և գըր-  
գուիչ մաղելեաց :

Պին 2 Շ ա կ է ի ւ ն :

Ալվաճառուին ՚ի գրատան Ա. Ռթո-  
ւոյս և ՚ի Փախանորդարանի կ. Պօլսոյ :